

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ.Գ. Հարությունյան – իրավաբանական գիտություն-
ների դոկտոր, պրոֆեսոր

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունն այսօր աշխարհին ներկայա-
նում է ոչ միայն վերջին տասնամյակների տնտեսական հրաշքով, այլև ու
առավելապես հազարամյակների արմատներ ունեցող մեծ մշակույթով, ինչը ոչ թե
պատմական հուշ, այլ ապրող իրողություն է: Բազմաթիվ հետազոտողներ են
անդրադարձել չինական ֆենոմենին ու խոստովանել, որ այս երկիրն ու մարդիկ
իրենց համար այնքան էլ հասու, ընկալելի ու մեկնաբանելի չեն: Մեր խորին
համոզմամբ գաղտնիքը նրանում է, որ այս երկրում յուրովի են միախառնված
անցյալն ու ներկան, պատմական հիշողությունն ու ներկայի իմաստավորումը,
օրենքի, ավանդույթի ու սովորույթի փոխլրացնող դերը՝ սոցիալական կեցության
բոլոր դրսևորումներում: Այդ բոլորին ավելանում են նաև զերմեծ սոցիալական
համակարգերին բնորոշ ներհամակարգային առանձնահատկությունները՝ զգուշավոր
պահպանողականությունից սկսած եւ վերջացրած համակարգային կայունության
յուրահատուկ կառուցակարգերի անհրաժեշտությունը:

Չինաստանը հանրային նոր որակ ստացավ 1911թ. հեղափոխության արդյուն-
քում, երբ դոկտոր Սուն Յատսենի գլխավորած հեղափոխական շարժումը վերջ դրեց
ֆեոդալական միապետությանը եւ երկրում հաստատեց հանրապետական կարգեր:
1949 թվականին Չինաստանը հռչակվեց Ժողովրդական Հանրապետություն:

Յուրաքանչյուր երկրի համար համակարգային զարգացումների կարևոր գրա-
վականը ժամանակի հոլովությունում առաջնահերթությունների ու արժեհամակարգի
հստակեցումն է: Դա նկատի ունենալով է, որ սահմանադրական մշակույթը

ներկայումս բնորոշվում է որպես դարերի փորձառությամբ հարստացված, պատմականորեն իմաստավորված որոշակի արժեքային համակարգ, որն ընկած է սոցիալական հանրության կողմից փոխհամաձայնությամբ իր կենսագոյի հիմնարար կանոնների սահմանման հիմքում:

Տարբեր երկրների իրավական զարգացումների տրամաբանությունը վկայում է, որ սահմանադրական մշակույթը, լինելով սոցիալական հանրության արժեհամակարգային ճանաչողության որոշակի քաղաքակրթական մակարդակի արտահայտություն, պայմանավորված է մի շարք գործոններով.

1. հասարակության զարգացման միտումներով եւ մարդու սոցիալական արժեվորման աստիճանով,
2. մարդ-հասարակություն փոխհարաբերությունների բնույթով,
3. սոցիալական հանրության արժեհամակարգային առաջնահերթություններով,
4. արտադրական հարաբերությունների զարգացման մակարդակով,
5. մարդու սոցիալական պաշտպանվածության աստիճանով,
6. հասարակական երեւույթների ու օրենքների իրավափիլիսոփայական ճանաչողության ու ընկալման մակարդակով,
7. հասարակության քաղաքական մշակույթի ու իրավագիտակցության աստիճանով,
8. հասարակական համաձայնության կայացման սոցիալ-քաղաքական նախադրյալների առկայությամբ,
9. պետական իշխանության գաղափարաբանական կողմնորոշումով եւ հասարակության ճակատագրի համար պատասխանատվության գիտակցման աստիճանով,
10. համընդհանուր արժեքների ներագդեցության բնույթով եւ ազգային ինքնության որակների հետ դրանց ներդաշնակման աստիճանով ու հնարավորությամբ,
11. համակարգային կայունության էկզոգեն (արտածին) եւ էնդոգեն (ներծին) գործոնների ազդեցության բնույթով եւ այլն:

Անցած դարի 80-ական թվականները շրջադարձային էին զարգացման սոցիալիստական ուղի ընտրած երկրների համար: Բոլորն էլ կանգնած էին արժեհամակարգային ընտրության առջեւ: Արեւելյան Եվրոպայի երկրները գրեթե առանց բացառության որդեգրեցին եվրոպական արժեհամակարգին ինտեգրումը խորացնելու ուղին, որը հետագայում հանգեցրեց նրանց ընդգրկմանը Եվրամիության կազմում:

Նախկին ԽՍՀՄ-ը փորձեց «զարգացած սոցիալիզմի» իր գաղափարաբանությունը կյանքի կոչել, սակայն պարզվեց, որ այն ի սկզբանե ձախողման դատապարտված փորձ էր: Բանն այն է, որ արժեքանական մակարդակում խորհրդային սահմանադրակարգի հիմքում շարունակվեց պահպանվել պետության, իշխանության ու միակուսակցական քաղաքական ուժի դերի բացարձականացումը: Սահմանադրությունը, կտրված մնալով հասարակական պրակտիկայից, **կորցնելով իշխանության սահմանափակման իր առաքելությունը՝** չէր կարող հանդես գալ որպես հասարակական համաձայնության միջոց ու արտահայտություն: Ժողովուրդը շարունակեց օտարված մնալ իշխանությունից եւ վերջինիս սուբյեկտ լինելուց վերածվեց իշխանության գործադրման օբյեկտի¹: Սեփականության իրական տերը ոչ թե ժողովուրդը կամ նույնիսկ պետությունն էր, այլ իշխանությունը: Իսկ իրավունքը կոչված էր պաշտպանելու ոչ թե մարդուն, նրա ազատությունն ու սեփականությունը, այլ իշխանությանը²: Շարունակեց տիրապետող մնալ աթեիստական աշխարհընկալման վրա կառուցված ու ձեւախեղված դոգմատիկ լեգիտապոզիտիվիստական իրավամտաճողությունը:

Միակուսակցական քաղաքական համակարգի պայմաններում իրավունքի հիմնական աղբյուր շարունակեց մնալ քաղաքական ուժի բացարձակ կամքը:

¹ Իրավափիլիսոփայական միտքը վաղուց փաստել է, որ Եվրոպայում, ինչպես նաեւ Նյուփիսային Ամերիկայում ժողովրդավարության զարգացումն օրգանապես կապված է մասնավոր սեփականության եւ շուկայական հարաբերությունների հաստատման հետ (մասնավորապես փնհ Տրաշյուն Բ. *Перспективы демократии и конституционное правосудие // Альманах - Конституционное правосудие в новом тысячелетии. Ереван, 2002, էջ 217*):

² Շար վերլուծարաններ իրավացի են այն հարցում, որ փոխառնապատկերում նույնական են դառնում իրավունքը եւ ուժը, իրավունքը մեկնաբանվում է որպես օրինականացված ուժի դրսևորում (փնհ Չետվերնին Բ. *Российская Конституция: концепция правопонимания // Конституционное право: Восточноевропейское обозрение, вып. 4, 2003, էջ 28*):

Իրական նորմաստեղծ մարմինը եղել ու մնում էր կուսակցության բարձրագույն մարմինը, որն ուներ անսահմանափակ ու չհակակշռված իշխանություն³։ Խորհրդային Միության Սահմանադրության առանցքային ու համակարգ ձևավորող դրույթներն էին շարունակում մնալ **կոմկուսի ղեկավար եւ ուղղություն տվող ուժը, սեփականության բազմաձևության ժխտումն ու պետական սեփականության բացառիկությունը**։

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը չգնաց այդ ուղիով, այլ 1970-ական թվականների վերջերից որդեգրեց ուրույն ու պատմականորեն արդարացված ճանապարհ։ Աստիճանաբար առաջընթացի հիմքում դրվեցին այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են **ժողովրդաիշխանությունը, սոցիալական շուկայական տնտեսությունը, սոցիալիստական իրավական պետությունը, բարեփոխումների շարունակականությունն ու անձնուրաց աշխատանքը, նյութական, քաղաքական ու հոգեւոր մշակույթի ներդաշնակ զարգացումը, ազգային համերաշխությունը, բազմակուսակցական համագործակցությունը, խաղաղությունն ու կայունությունը**։ Դրանք դարձան 1982թ. դեկտեմբերին ընդունված Սահմանադրության արժեքանական հենքը։

Սահմանադրության թե՛ նախաբանում եւ թե՛ 1-ին հոդվածում նախ ամրագրվում է «ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայի» սկզբունքը։ Վերջինիս էության համեմատական վերլուծությունն առանցքային նշանակություն ունի սահմանադրական արժեքանության բացահայտման տեսանկյունից։

Եվրոպական սահմանադրական պրակտիկայում հստակ ամրագրված է ժողովրդաիշխանության սկզբունքը՝ որպես իրավական պետության առանցքային արժեք։ Համեմատական սահմանադրական վերլուծությունը վկայում է, որ սահմանադրա-

³ Գործնականում մեկ մարմնի ձեռքում էր կենտրոնացված քաղաքական եւ փնտեսական ոլորտներում կառավարման գործառույթը, որի արդյունքում ձեւավորված գերկենտրոնացած կորպորատիվ համակարգն ինքնավերարարադրվում էր իշխանության շահի թելադրանքով՝ խորացնելով հակասությունն իշխանության եւ հանրության շահերի միջեւ։ Պարահական չէ, որ գրականության մեջ այդ համակարգը հաճախ բնորոշվում է նաեւ որպես բռնապետական սոցիալիզմ (մասնավորապես փես Չիրկին В.Е. Общечеловеческие ценности и современное государство // Государство и право, 2002, N2, էջ 5-13)։

կան նորմ-սկզբունքների մակարդակում ժողովրդաիշխանությունն ամենից առաջ ենթադրում է, որ.

- ժողովրդին է պատկանում ամբողջ իշխանությունը,
- իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է,
- ժողովրդի ինքնիշխանությունն անօտարելի է,
- ժողովուրդը կարող է իր իշխանությունն իրականացնել ինչպես անմիջակա- նորեն, այնպես էլ իր ներկայացուցիչների միջոցով,
- ոչ ոք ժողովրդից իր իշխանությունը խլել կամ այն սահմանափակել չի կարող, դա համարվում է ծանրագույն հանցագործություն,
- պետական իշխանությունը ժողովրդաիշխանության դրսևորման ձևերից մեկն է, որը նույնպես ժողովուրդն իրականացնում է անմիջականորեն կամ իր ներկայացուցիչների միջոցով:

«Ժողովուրդ» հասկացությունն ամենալայն քաղաքական-իրավական իմաստով ենթադրում է մեկ պետության մեջ միավորված քաղաքացիների: Ժողովրդի կամքով ձևավորված իշխանության համակարգը պետք է լինի թափանցիկ եւ ժողովրդին հաշ- վետու: Պետությունն իշխանությունն ստանում է ժողովրդից, իրականացնում է ժո-ղովրդով, հանուն ժողովրդի:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրաիրավական համակարգում «ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայի» սկզբունքն իր եությամբ եւ իրավակիրառական նշանակությամբ էապես տարբերվում է «պրոլետարիատի դիկտատուրա» սկզբունքից եւ համադրելի է դասական ժողովրդաիշխանության սկզբունքի հետ:

Սահմանադրական հիշյալ սկզբունքը մեկուսի չի գործում: Այն արժեքանական ընդհանուր համակարգի կարեւոր տարրերից է: Այդ համակարգում առանձնահատուկ ուշադրության է արժանի **սոցիալիստական իրավական պետության կայացման սահմանադրական սկզբունքը**, ինչն իր արդի իրավակիրառական նշանակությամբ ներդաշնակ է եվրոպական լայն տարածում

գտած՝ իրավական պետությունում սոցիալական շուկայական հարաբերությունների հաստատման սկզբունքին: Վերջինս արտացոլված է բազմաթիվ երկրների սահմանադրությունների սահմանադրական կարգի հիմունքներում, ինչպես նաև առանձնահատուկ կարեւորվեց Եվրոպական միության Սահմանադրության մշակման փուլում ու Լիսաբոնյան համաձայնագրի շրջանակներում: Առանցքային խնդիրն այն է, որ թե՛ Եվրամիության երկրներում եւ թե՛ Չինաստանում սոցիալական պետության կայացումը չի հակադրվում, մի կողմից՝ իրավական պետությանը, մյուս կողմից՝ ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացմանը, ինչը չընկալվեց եւ բացարձակապես չընդունվեց ԽՍՀՄ-ում: Մեր խորին համոզմամբ, չինական տնտեսական հրաշքի համար **ելակետային նշանակություն ունեցավ տնտեսության ազատականացման խելամիտ ներդաշնակումը սոցիալական պետության սկզբունքներին:** Դա իրականացվեց արդարացված զուշությամբ՝ ապահովելով տնտեսական աննախադեպ աճ՝ սոցիալական հստակ կողմնորոշումով: Սա այն դեպքն է, երբ արտադրական ու բաշխման հարաբերությունների միջեւ առկա է ծրագրանպատակային ներդաշնակություն, եւ օբյեկտիվ հակադրությունը չի վերաճում անտագոնիզմի: Հիմնական կարգախոս է դառնում՝ ոչ թե արտադրություն՝ հանուն արտադրության, այլ արտադրություն՝ հանուն սոցիալական նպատակների իրականացման: Խնդիրն այն նուրբ սահմանագծի ճիշտ ընտրությունն է, երբ համակարգի սոցիալական կողմնորոշումը հակադրության մեջ չի մտնում շուկայական տնտեսական օրենքների գործողության տրամաբանության հետ: Պատմական իրողությունները վկայեցին, որ Չինաստանը գտավ այդ սահմանագծի ճիշտ ընտրության բանալին:

Մեկ կարեւոր դիտարկում եւս: 1992 թվականին առաջին պաշտոնական այցով Չինաստանում գտնվելու ժամանակ վարչապետ Լի Պենի հետ մեր առանձնազրույցի ժամանակ նա կարեւոր մի դիտարկում կատարեց՝ կապված ազատ տնտեսական գոտիների զարգացման հայեցակարգային մոտեցումների հետ: Ասվածի էությունը հանգում էր նրան, որ Չինաստանը չի կարող բարեփոխումների հարցում

հեղափոխական մոտեցում դրսևորել: Միսալի դեպքում անհնարին կլինի կանգնեցնել գործողության մեջ դրված ու շուրջ 1.5 միլիարդ բնակչությանն առնչվող պետական հսկա թափանիվը՝ սխալը շտկելու եւ նոր մոտեցումներ որդեգրելու համար: Ուստի որդեգրվել է «ընդլայնվող սպիրալի» մոդելը՝ տնտեսական նորարարությունը բազմակի անգամ փորձարկվում է մեկ ձեռնարկության, մեկ քաղաքի, մեկ շրջանի, մեկ ռեգիոնի մակարդակով, շտկվում են թերիներն ու բացերը, ապա այն համապետական ընդգրկում է ստանում: Այս հայեցակարգը, բխելով բարեփոխումների շարունակականության երաշխավորման սահմանադրական սկզբունքից, նույնպես լիովին իրեն արդարացրեց՝ երկրի զարգացմանը հաղորդելով կայուն դինամիզմ: Իսկ այդ բարեփոխումների գաղափարաբանական հենքը Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված այն կարեւոր սկզբունքն էր, համաձայն որի՝ նախատեսվում էր հանրային սեփականությանը զուգահեռ սեփականության այլ ձևերի զարգացման հնարավորություն: Հանրահայտ է, որ տնտեսական հարաբերությունների բնույթը պայմանավորված է առկա սեփականության ձևով: Սեփականության բազմաձևությունն իր հերթին այն օբյեկտիվ նախադրյալն է, որի պայմաններում ի հայտ են գալիս եւ գործում են շուկայական տնտեսական օրենքները, ազատ մրցակցությունը դառնում է տնտեսության զարգացման գլխավոր խթանը: Չինաստանը 1982 թվականին սահմանադրական մակարդակով ստեղծեց նման զարգացման իրավական կայուն երաշխիքներ:

Հատկապես ուշադրության են արժանի Սահմանադրության 15-րդ հոդվածի այն դրույթները, համաձայն որոնց՝ «պետությունը կյանքի է կոչում սոցիալիստական շուկայական տնտեսությունը», ինչպես նաեւ շեշտը դրվում է ոչ թե տնտեսական ողջ համակարգի «կառավարման», այլ «մակրոկարգավորման» կատարելագործման պետական գործառույթի վրա: Սրանց տարբերությունը հսկայական է՝ վարչահրամայական կառավարումից տնտեսական լծակներով մակրոտնտեսական կարգավորման անցնելու առումով: Սահմանադրության 18-րդ հոդվածով

իրավական նախադրյալներ ստեղծվեցին նաև արտասահմանյան ներդրումների խթանման ու դրանց իրավական պաշտպանության համար:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների համառոտ վերլուծությունից հետևում է, որ այս երկրում ժամանակին որդեգրվել է սահմանադրական զարգացումների ինքնուրույն եւ հանրային կյանքի իրողություններից բխող մոդել, որի հիմքում դրվել են ոչ միայն իրատեսական նպատակներ, այլև խորությամբ հաշվի են առնվել սոցիալական տվյալ հանրության պատմականորեն ձևավորված արժեհամակարգային առանձնահատկությունները: Սահմանադրական լուծումները բխել են իրական կյանքից, զարգացող հասարակական հարաբերությունների տրամաբանությունից ու այդ հարաբերությունների հետագա զարգացման խթան են հանդիսացել: Դրա շնորհիվ է, որ Չինաստանը խուսափել է մոդելային սահմանադրությունների ներդրման բացասական հետեւանքներից⁴:

Ակնհայտ է նաև մեկ այլ իրողություն՝ որոշակի անհամատեղելիությունը տնտեսական ազատության եւ քաղաքական բեւեռացվածության միջև: Արեւմտյան իրավամտաճողությունը ենթադրում է, որ ազատ տնտեսական մրցակցությունը, իրավունքի գերակայությունը եւ ժողովրդավարությունը միմյանցից զատ գոյություն ունենալ չեն կարող կամ պարզապես իմաստազրկվում են: Չինաստանում այս հիպոթեզը դասական ընկալմամբ չի գործում: Ավանդույթների ու սովորույթների անհամեմատ մեծ ազդեցությունը հանրային կյանքի վրա՝ ստեղծում է սոցիալ-իրավական նոր որակ եւ պայմանավորում է հասարակական հարաբերությունների կանոնակարգված զարգացման իր տրամաբանությունը: Այն, ինչ առկա է Չինաստանում՝ դժվար է տեղավորել «կապիտալիզմ» կամ «սոցիալիզմ» հասկացութային դաշտում: Այդ հարաբերություններն իրենց բնույթով ու համակարգային առանձնահատկություններով պարզապես պետք է բնորոշել «չի-

⁴ Տե՛ս. Арутюнян Г.Г. Конституционализм: уроки, вызовы, гарантии. Киев, <Логос>, 2011. – С 119-120.

նիզմ» եւ այն դիտարկել որպէս ինքնուրոյն ու որոշակիորեն կյանքի քննությունը բռնած երեւոյթ: